ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Երևան, 14 փետրվարի 2022թ.

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ «ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ»), ի դեմս Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հակոբյանի, որը գործում է ՀՀ «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքով իրեն վերապահված իրավասությունների հիման վրա,

և

Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը (այսուհետ՝ «Դիտորդ մարմին»), ի դեմս Դիտորդ մարմնի համակարգող Հերիքնազ Հարությունյանի, որը գործում է Դիտորդ մարմնի աշխատակարգով իրեն վերապահված իրավասությունների հիման վրա,

Նպատակ ունենալով միավորել Հանձնաժողովի ու Դիտորդ մարմնի (այսուհետ միասին՝ «ԿՈՂՄԵՐ»)՝ տեսալսողական մեդիայի բնագավառում մասնագիտական էթիկայի պահպանմանն ուղղված ջանքերը, ստորագրեցին համագործակցության սույն Հուշագիրը հետևյալի մասին.

1. Համագործակցության նպատակները

Սույն Հուշագրի շրջանակներում նախատեսվող համագործակցության հիմնական նպատակն է նպաստել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող և Հանձնաժողովի կողմից հեղինակագրված և լիցենզավորված տեսալսողական լրատվամիջոցներում մասնագիտական էթիկայի կանոնների պահպանմանը, ինչը ենթադրում է ոլորտի սուբյեկտների կողմից միջազգային լավագույն փորձի վրա հիմնված մասնագիտական էթիկայի կանոնների ընդունում, կանոնների մշտական կատարելագործում, հստակ մեկնաբանում ու անկաշկանդ և ոչ խտրական կիրառում:

2. Համագործակցության ձևաչափը

Սույն Հուշագրի շրջանակներում Կողմերը համաձայնում են սահմանել համագործակցության հետևյալ ձևաչափը.

2.1 Էթիկայի որոշակի կանոնների կամ դրանց որևէ տարրի մասին, կամ էթիկայի կանոնների կիրառման, կամ ենթադրաբար էթիկայի կանոնագրի խախտման հետ կապված փորձագիտական խորհրդատվության անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովը կարող է դիմել Դիտորդ մարմնին՝ խնդրո առարկայի վերաբերյալ փորձագիտական կարծիք կամ եզրակացություն ներկայացնելու խնդրանքով:

2.2 Ստանալով Հանձնաժողովի դիմումը, Դիտորդ մարմինը իր աշխատակարգով նախատեսված ժամկետներում տրամադրում է փորձագիտական կարծիքը կամ եզրակացությունը, որը կարող է ներառել նաև միջազգային լավագույն փորձից օրինակներ:

2.3 Կողմերը պարբերաբար կազմակերպում են տեսալսողական լրատվամիջոցների բնագավառում էթիկայի կանոնների արդի խնդիրների քննարկմանը նվիրված միջոցառումներ:

2.4 Կողմերը պայմանավորվում են փոխանակել ոլորտի զարգացմանը նպաստող փաստաթղթերը:

3. Համագործակցության համակարգումը

3.1 Հուշագրի ձևաչափին վերաբերող հարցերի շուրջ արդյունավետ համագործակցության նպատակով համակարգումը իրականացնում են Կողմերի լիազորված ներկայացուցիչները: Համատեղ միջոցառումներ կամ գործնական հանդիպումներ կազմակերպելու և այլ տեխնիկական հարցեր լուծելու համար Կողմերը նշանակում են մեկական պատասխանատու, որոնք կատարված կամ կատարվելիք աշխատանքների մասին զեկուցում են անմիջապես Հանձնաժողովին, Դիտորդ մարմնին կամ նրանց կողմից լիազորված ներկայացուցիչներին:

3.2 Կողմերը հանդիպում են ըստ անհրաժեշտության՝ սույն Հուշագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների արդյունքները քննարկելու, գնահատելու և հետագա համագործակցությունը ծրագրելու նպատակով:

4. Հուշագրի ուժի մեջ մտնելը և դադարեցումը

4.1 Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրելու պահից և գործում է անժամկետ:

4.2 Յուրաքանչյուր Կողմ կարող է միակողմանի ու առանց պատճառաբանման դադարեցնել համագործակցությունը՝ այդ մասին առնվազն մեկ ամիս առաջ տեղեկացնելով մյուս Կողմին: Հուշագիրը կարող է նաև դադարեցվել (լուծվել) կամ փոփոխվել Կողմերի գրավոր համաձայնությամբ:

5. Այլ դրույթներ

5.1 Հուշագիրը չի սահմանափակում Կողմերի համագործակցությունը այլ կազմակերպությունների/կառույցների և համապատասխան շահագրգիռ անձանց հետ, ինչպես նաև Կողմերի համագործակցությունը այլ ոլորտներում ու լրատվությանն առնչվող այլ հարցերի շուրջ:

5.2 Սույն Հուշագիրը Կողմերի համար որևէ ֆինանսական կամ այլ գույքային պարտավորություններ չի ստեղծում: Կողմերը գործում են բարեխղճության և բարոյական պարտավորության հիմքով:

Կողմերի ստորագրությունները

Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի անունից՝

Տիգրան Հակոբյան
Նախագահ

Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի
Դիտորդ մարմնի անունից՝

Բորիս Նավասարդյան,
ԴՄ լիազորված անդամ